ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի դեկտեմբերի 4 - 7-ը
Ղազախստանի Հանրապետություն, Աստանա
գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Գագիկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Աստանա (Ղազախստանի Հանրապետություն), 2017 թվականի դեկտեմբերի 4-7-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

«Եվրասիական տնտեսական միության տարածքում թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների նկատմամբ գործողություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի շրջանառվող նախագծի քննարկում:

6. **Քննարկված թեմաները**

Նախագիծը լրամշակելու ուղղությամբ հայկական կողմի առաջարկների ներկայացում, հիմնավորում և անդամ պետությունների փորձագետների հետ համաձայնեցում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Հայկական կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ ուղղված ԵԱՏՄ տարածքում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտադրության տեղաշարժի դյուրինացմանը, մասնավորապես՝ հարգադրոշման փոխճանաչելիության նպատակահարմարությանը:

8. **Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Արդյունքում լրամշակվել է և վերջնական տեսքի է բերվել համաձայնագրի նախագիծը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները և ակնկալվող արդյունքները

Արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագայում տեսակոնֆերանսի ձևաչափով ևս մեկ անգամ քննարկել նախագծում տեխնիկական շտկումներ կատարելու անհրաժեշտությունը և սահմանված կարգով ներկայացնել վերջնական տարբերակը համաձայնեցման:

10. Գործուղվողը, ստորագրություն, ամսաթիվ

Գագիկ Մկրտչյան

18.12.2017թ.